# ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԾԱՎԱԼՈՒՄԸ
(1988 թ. փետրվար-նոյեմբեր)

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ Ռ. Լ.

Արցախի հայությունը, ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, որն ամրապնդվեց ԽՄԿԿ XXVII համագումարի (1986 թ.) որոշումներով[1], կրկին բարձրացրեց դեռևս 1920-ական թվականներից ծխացող Ղարաբաղյան հիմնախնդիրը: Տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) Ադրբեջանի իշխանությունները կանխամտածված իրականացնում էին հակահայկական քաղաքականություն, որը նպատակաուղղված էր մարզը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության օրինակով լրիվ հայաթափելուն ու ադրբեջանցիներով վերաբնակեցնելուն: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղում տնականորեն ոտնահարվում էին հայ բնակչության մարդկային իրավունքներն ու ազգային արժանապատվությունը, ինչը հանգեցնում էր հայերի արտագաղթին իր պատմական հայրենիքից: Այսպես, 1926-1979 թթ. ընթացքում ԼՂԻՄ-ից տարեկան միջին հաշվով արտագաղթում էր շուրջ 2 հազար հայ, ինչի հետևանքով հայերի թվաքանակը նշյալ ժամանակահատվածում 111,7 հազարից հասավ միայն 123,1 հազարի (աճել էր ընդամենը 10,2 %-ով), իսկ ադրբեջանցիներինը՝ 12,6 հազարից 37,2 հազարի (ավելացել էր գրեթե 3 անգամ)[2]: Արդյունքում, եթե 1923 թ. մարզի բնակչության ընդհանուր թվաքանակում հայերի մասնաբաժինը կազմում էր 94,4 %, ապա 1979 թ. այն նվազեց՝ կազմելով 75,9 %, դրան հակառակ աճում էր ադրբեջանցիների մասնաբաժինը՝ 1923 թ. 3%-ից 1959 թ. հասնելով 13%-ի, իսկ 1988 թ.՝ 24%-ի[3]:

Մարզի տագնապալից ժողովրդագրական իրավիճակի պատճառներից էին կուտակված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, որոնք բացառապես լուծվում էին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության նպատակների իրականացման դիրքերից: Դրա հետևանքով ԼՂԻՄ-ի ժողովրդական տնտեսության ճյուղային և միջճյուղային կառուցվածքը, արտադրողական ուժերի տեղաբաշխումը, տարածքային միավորների տնտեսական ծանրաբեռնվածությունը չէին համապատասխանում մարզի բնատնտեսական պայմաններին ու ներուժին: ԼՂԻՄ-ում գրեթե չէին հիմնվում աշխատատար և գիտատար արտադրություններ, ինչը նպատակաուղղված էր մարզը հիմնականում որպես ագրարային գոտի պահպանելուն: Մինչդեռ Լեռնային

---

[1] *Материалы Пленума Центрального Комитета КПСС. 23 апреля 1985 года, М., 1985; Материалы 27 съезда Коммунистической партии Советского Союза, М., 1986.*

[2] *Нагорный Карабах. Историческая справка, Е., 1988, с. 45-46.*

[3] *Նույն տեղում, էջ 45, Нагорно-Карабахская республика. Путь к вершинам, Степанакерт, 2001, с. 75.*

Ղարաբաղը միշտ էլ աչքի է ընկել բնակչության բարձր կրթական մակարդակով: Արցախահայ բազմաթիվ բարձրորակ մասնագետներ, զրկված լինելով հայրենիքում համապատասխան աշխատանք գտնելու հնարավորությունից, հաջողությամբ աշխատում էին միութենական տարբեր հանրապետությունների գիտության, արդյունաբերության և այլ բնագավառներում: Դրա հետ մեկտեղ մարզի սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը վերջնական պատրաստի ապրանքի էր վերածվում առավելապես ադրբեջանաբնակ շրջանների ձեռնարկություններում, ինչի հետևանքով մարզը զրկվում էր զգալի եկամուտներից՝ վերածվելով հանրապետության տնտեսության զուտ հումքային ածանցյալի: 1981-1986 թթ. ԼՂԻՄ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալի աճի տեմպերը կազմում էին 129 %, որը զգալիորեն զիջում էր ինչպես Ադրբեջանի (163,3%), այնպես էլ առավելապես ադրբեջանցիներով բնակեցված Նախիջևանի Ինքնավար Հանրապետության (203 %) համապատասխան ցուցանիշներին: Բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալ ներդրումների ծավալով մարզը 1981-1985 թթ. ավելի քան 2, իսկ 1986 թ.՝ 2,7 անգամ զիջում էր Ադրբեջանին[4]: Լեռնային Ղարաբաղում տարիներ շարունակ ձգձգվում էին արտադրական ձեռնարկությունների և բնակելի շենքերի շինարարությունները: Այստեղ կապիտալ շինարարության տարեկան միջին տեմպերը գրեթե 2,5 անգամ ցածր էին Ադրբեջանի ընդհանուր ցուցանիշից[5]: Խիստ անմխիթար վիճակում էին գտնվում հաղորդակցության ուղիները, մասնավորապես, կարծրածածկ ավտոճանապարհների բացակայությունը սահմանափակում էր մարզի շրջանների միջև բնականոն կապերի զարգացման հնարավորությունները: Միաժամանակ, փաստորեն, լիովին բացակայում էին տնտեսական կապերը Հայաստանի հետ: Այս ամենը բացասաբար էր անդրադառնում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, խոչընդոտում բնակչության լիարժեք զբաղվածության ապահովմանը և հանգեցնում նրա արտագաղթին:

Վերջինս մեծապես պայմանավորված էր նաև հայ բնակչության ազգային-մշակութային ու հոգևոր պահանջմունքների բավարարման ոլորտների ծայրահեղ անմխիթար վիճակով: Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ում փակում էին հայկական դպրոցները (1960 թ. սկսած՝ մարզում լուծարվել էր 46 հայկական դպրոց)[6], ուսումնական ծրագրերից հանվում էր «հայոց պատմություն» առարկան, և փոխարենը մտցվում Ադրբեջանի պատմություն, սահմանափակվում էր հայոց լեզվով դասագրքերի և գրականության տարածումը: Արգելված էր Երևանից հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ընդունումը, ամեն կերպ խոչընդոտներ էր հարուցվում Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատմանը: Հակահայկական քաղաքականության թիրախ էին դառնում նույնիսկ Լեռնային Ղարաբաղի պատմական հուշարձանները, որոնք ոչ միայն ընդգրկված չէին պետության կողմից պահպանվող հուշարձանների ցանկում, այլև

---

[4] *Нагорный Карабах. Историческая справка, с. 49-50.*

[5] *Нагорно-Карабахская республика. Путь к вершинам, с. 73.*

[6] Նույն տեղում, էջ 75:

հետևողականորեն ավերվում և ոչնչացվում էին կամ էլ ներկայացվում որպես «ադրբեջանցիների նյութական մշակույթ»: Դրանով իսկ Բաքուն փորձում էր հիմնավորել իր առաջ քաշած՝ արցախահայության ոչ տեղաբնիկ լինելու մասին հակագիտական, ստահոդ տեսությունը:

ԼՂԻՄ-ում, ինչպես և Ադրբեջանի հայաշատ այլ վայրերում ազգային խտրականությունն ակնբախորեն դրսևորվում էր նաև կադրային քաղաքականության ասպարեզում: Մարզի կուսակցական, վարչատնտեսական, իրավական մարմինները, կրթական, մշակութային, առողջապահական հաստատությունները զանգվածաբար համալրվում էին ադրբեջանցիներով, մինչդեռ հայերի ընդգրկման համար մտցվում էին խիստ սահմանափակումներ ու ստեղծվում արհեստական դժվարություններ: Արդյունքում մեծ թվով հեռանկարային և խոստումնալից հայազգի համապատասխան կադրեր հարկադրված լքում էին մարզը:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը վաղուց դադարել էր զուտ սոցիալ-տնտեսական խնդիր լինելուց և պահանջում էր քաղաքական լուծում: Հետևաբար, Արցախի հայության ազգային-ազատագրական շարժման ծավալումը պատահական չէր ու առավել ևս հրահարված չէր դրսից: Դեռևս 1920-ական թվականներից սկսած՝ Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման հարցը ՀԽՍՀ-ի ու ԼՂԻՄ-ի հասարակայնության տարբեր շրջանների ներկայացուցիչների կողմից բազմիցս բարձրացվել էր միութենական մարմինների առջև, սակայն այդպես էլ լուծում չէր ստացել:

«Վերակառուցման» քաղաքականության հռչակումը արցախահայությանը նոր հույսեր ներշնչեց: 1987 թ.-ին մարզի գրեթե բոլոր ձեռնարկություններում, հաստատություններում, կոլտնտեսություններում և սովխոզներում անցկացվեցին կոլեկտիվների ժողովներ, որոնցում ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորման անհրաժեշտության մասին որոշումներ ընդունվեցին: Նման պահանջ բովանդակող հանրագրի տակ ստորագրեցին ավելի քան 80 հազար արցախահայեր: Մարզի աշխատավորական-մտավորական շրջանների ներկայացուցիչներից կազմված պատվիրակությունները Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման ակնկալիքով մեկը մյուսի հետևից Մոսկվա էին մեկնում, ուր կենտրոնական իշխանությունների բարձրաստիճան պաշտոնյաների հուսադրող խոստումներ ստանալուց հետո ոգևորված վերադառնում էին հայրենիք: 1988 թ. սկզբներին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների շրջանային խորհուրդների նստաշրջանները որոշումներ կայացրին մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու մասին: Այդ որոշումները սահմանված կարգով ներկայացվեցին վերադաս մարմիններին: 1988 թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտում կայացավ առաջին զանգվածային հանրահավաքը՝ ուղղված ադրբեջանական բռնատիրության դեմ: Չնայած ուժային կառույցների սպառնալիքներին՝ հազարավոր արցախցիներ, անտեսելով վտանգը, դուրս եկան մարզկենտրոնի կենտրոնական հրապարակ և ԼՂԻՄ-ի ղեկավարությունից պահանջեցին մայր Հայաստանի հետ վերամիավորվելու մասին որոշում ընդունել: Այդ զանգվածային ցույցին անմիջապես հետևեցին ադրբեջանցի պետական բարձրաստիճան պաշտոնյաների հոխորտալից հայտարարությունները՝ հարյուր

հազար ադրբեջանցիների Ղարաբաղ ներխուժելու և սպանդ իրականացնելու պատրաստակամության մասին[7]: Դրան հաջորդեցին Ադրբեջանի տարբեր շրջաններում հայերի հասցեին վիրավորանքներ հնչեցնելու, բռնություններ կիրառելու դեպքերը: Սակայն արցախահայությունը ոչ միայն չնահանջեց, այլև նոր թափով շարունակեց պայքարը:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը ուժերի մեծ լարումով ԽՍՀՄ սահմանադրությանը համապատասխան որոշում ընդունեց՝ դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին[8]: Ի պաշտպանություն այդ պատմական որոշման՝ Ստեփանակերտում սկսվեցին «միացում» կարգախոսով բազմամարդ հանրահավաքներ, որոնք ղեկավարվում էին մարտի սկզբին ստեղծված «Կռունկ» կազմակերպության կողմից:

Փետրվարի 21-ից Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց: Ամբողջ հայ ժողովուրդը միահամուռ սատար կանգնեց Արցախի իր հայրենակիցների արդար պահանջին: Հանրապետության հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում ժողովներ, ցույցեր ու հանրահավաքներ տեղի ունեցան: Հասարակայնության տարբեր խավերի ներկայացուցիչները Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքին զորավիգ լինելու իրենց վճռականությունն էին հայտնում և միութենական իշխանություններից պահանջում արդարացիորեն լուծել այդ հիմնախնդիրը: Նման ակնկալիքով Հայաստանից Մոսկվա հղվեցին աշխատանքային կոլեկտիվների բազմաթիվ որոշումներ ու դիմումներ, պատմական տեղեկանքներ, անհատ մարդկանց խնդրագրեր և այլն: Միաժամանակ Երևանում և հանրապետության այլ քաղաքներում սկսեցին բազմամարդ հանրահավաքներ կազմակերպվել: Մայրաքաղաքի Թատերական հրապարակի առաջին հանրահավաքների կազմակերպիչներից և ղեկավարներից էին տնտեսագետ Իգոր Մուրադյանը, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը և այլք: Աննախադեպ արագությամբ աճում էր հանրահավաքների մասնակիցների թիվը: ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուրհազարանոց հանրահավաքներ, ցույցեր ու երթեր, որոնց ընթացքում չարձանագրվեց օրինականության խախտման որևէ լուրջ դեպք, թույլ չտրվեց ազգայնամոլական ու քրեական ոչ մի արարք:

Սկզբնական շրջանում հայ ժողովուրդը, հավատալով գորբաչովյան «վերակառուցմանը», հանրահավաքների ու ցույցերի էր դուրս գալիս ԽՍՀՄ պետական դրոշներով, Վ. Լենինի, Մ. Գորբաչովի, կուսակցական ու պետական այլ գործիչների դիմանկարներով, ինչպես նաև «Լենին-կուսակցություն-Գորբաչով», «Հանուն վերակառուցման, ժողովրդավարության և հրապարակայնության»

---

[7] **Василевский А .,** *Туча в горах (Аврора, 1988, N 10).*

[8] Սովետական Ղարաբաղ, 21. II. 1988:

կոչերով: Ավելին, երբ 1988 թ. փետրվարի 26-ին հանդարտություն ու զսպվածություն հանդես բերելու հատուկ կոչով Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին դիմեց ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը[9], հայ ժողովուրդը նրա դիմումն ընդունեց պահի լուջ գիտակցումով: Անմիջապես դադարեցվեցին հանրահավաքները, ցույցերը, երթերը, գործադուլներն ու դասադուլները:

Սակայն դեպքերի հետագա ընթացքը հայ ժողովրդին հարկադրեց նորից ու նորից հավաքվելու Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև, մայրաքաղաքի գլխավոր պողոտայում: Այդ հանրահավաքների ու ցույցերի ընթացքում արցախահայության օրինական պահանջի պաշտպանությամբ ելույթներ էին ունենում հանրապետության գիտության, մշակույթի գործիչներ, բանվորներ, ծառայողներ, ուսանողներ, աշխատանքի և պատերազմի վետերաններ, Հայաստանում բնակվող տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: Նրանց թվում էին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ, աշխարհահռչակ աստղագետ Վիկտոր Համբարձումյանը, ճանաչված արձակագիր Սերո Խանզադյանը, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը և շատ ուրիշներ: Փետրվարի 26-ին Մ. Գորբաչովի մոտ եղան Սիլվա Կապուտիկյանը և գրող-հրապարակախոս Զորի Բալայանը: Նրանք, երկրի ղեկավարին ներկայացնելով Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը, խնդրեցին ունկնդիր լինել հայ ժողովրդի ձայնին և աջակցել հարցի արդարացի լուծմանը[10]: Հանրապետության հասարակայնությունը նման պահանջ ներկայացրեց նաև այդ օրերին Հայաստան ժամանած ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարներ Վ. Դոլգիխին և Ա. Լուկյանովին:

Սակայն կենտրոնը, չնայած իր հռչակած «վերակառուցում», «հրապարակայնություն», «ժողովրդավարություն» կարգախոսներին, ի սկզբանե Ղարաբաղյան շարժման նկատմամբ բացասական դիրք գրավեց, քանի որ երկրի ներսում ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը լուրջ վտանգ էր սպառնում կոմունիստական կայսրության համապարփակ տիրապետությանը: Ուստի և պատահական չէր, որ արդեն իսկ փետրվարի 21-ին ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն հապճեպ ու միտումնավոր որոշում ընդունեց, որով Ղարաբաղյան հարցի արդարացի լուծմանը ձգտող ժողովրդական շարժումը որակեց «ծայրահեղական»: Դրանից հետո կենտրոնը մինչև վերջ հավատարիմ մնաց այդ որոշմանը և փորձեց ամեն կերպ հիմնավորել այն: Այդ նպատակով Կրեմլը ձեռնամուխ եղավ Ղարաբաղյան հիմնախնդիրը ոչ թե որպես քաղաքական, այլ իբրև զուտ սոցիալ-տնտեսական խնդիր ներկայացնելուն: Պատահական չէր, որ «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 1988-1995 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» ԽՄԿԿ կենտկոմի և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1988 թ. մարտի 24-ի որոշմամբ ԼՂԻՄ-ին տրամադրվում էր 400 մլն ռուբլի գումար՝ մարզում կուտակված սոցիալ-

[9] Սովետական Հայաստան, 27. II. 1988:

[10] **Կապուտիկյան Ս.,** Էջեր փակ զզրոցներից, Ե., 1997, էջ 275-293:

տնտեսական և մշակութային հիմնախնդիրները լուծելու համար[11]: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունն այդ գումարը հիմնականում օգտագործեց մարզի ադրբեջանական բնակավայրերի զարգացման նպատակով:

Այս ամենը հայ ժողովրդի վրա սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ, զգաստացրեց նրան: Փետրվարյան մեկշաբաթյա ցույցերից ու հանրահավաքներից հետո Մ. Գորբաչովի դիմապատկերները վերացան, կարգախոսները սկսեցին փոխվել, իսկ շարժման մեջ աստիճանաբար զգացմունքայինից իրատեսականին անցնելու միտումներ դրսևորվեցին:

Զգտելով հնարավորինս արագ «մարել» Արցախյան շարժումը՝ կենտրոնը ձեռնամուխ եղավ նրա ճնշմանն ուղղված կտրուկ քաղաքական քայլերի իրագործմանը: Այդ նպատակով նա, սերտորեն համագործակցելով Ադրբեջանի իշխանությունների հետ, օգտագործում էր իր բոլոր լծակները: Երկրի զանգվածային լրատվամիջոցների ողջ համակարգը Ղարաբաղյան հարցի բարձրացման առաջին երեք օրերի ընթացքում քար լռություն պահպանելուց հետո (թե՛ կենտրոնական և թե՛ հանրապետական լրատվամիջոցները բացարձակապես ոչինչ չէին հայտնում ինչպես ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի որոշման, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցող զանգվածային ցույցերի ու հանրահավաքների մասին) բացահայտ հակահայկական դիրք գրավեց: Գրեթե ամեն օր կենտրոնական մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն, չանդրադառնալով Արցախյան շարժման ծագման պատճառներին և հիմնախնդրի լուծման հնարավոր ուղիներին, ինտերնացիոնալիզմի ու ժողովուրդների բարեկամության պարզունակ քարոզչության և խոհեմություն հանդես բերելու բարձրահունչ կոչերի ներքո վարկաբեկում էին հայ ժողովրդին, նրա համազգային շարժումը որակում իբրև «ծայրահեղական ու ազգայնամոլական», ինչը խթանում էր Ադրբեջանի լրատվամիջոցների կողմից սանձարձակ հակահայկական քարոզչության ծավալմանը: Միաժամանակ կենտրոնական լրատվամիջոցները Հայաստանում սկսված Ղարաբաղյան շարժումը հաճախ կապում էին հանրապետության ղեկավարության, նրա օրոք այստեղ կուտակված բացասական երևույթների՝ «ստվերային տնտեսության», մաֆիայի հետ՝ շեշտելով, թե իբր այդ շարժմամբ ղեկավարությունը ցանկանում էր մարդկանց ուշադրությունը շեղել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից, կոծկել կոռուպցիայի, կաշառակերության ու հովանավորչական իր քաղաքականությունը: Նման մեկնաբանությունները ժողովրդական շարժման վրա ստվեր գցելու, այն վարկաբեկելու միտումնավոր փորձեր էին, քանի որ Հայաստանի ղեկավարությանը բնավ էլ արտակարգ իրավիճակ պետք չէր: Նա խիստ անհանգստացած էր զարթոնք ապրող ազգային շարժումից և ձգտելով ամեն գնով պահպանել իր իշխանությունը՝ փորձում էր կասեցնել այն:

Արցախյան շարժման ծավալման հենց առաջին օրերից լիովին բացահայտվեց Հայաստանի իշխանությունների կտրվածությունը ժողովրդական զանգվածներից: Հանրապետության ղեկավարությունը չկարողացավ ներազդել

[11] Սովետական Հայաստան, 29. III. 1988:

իրադարձությունների ընթացքի վրա, այդ ուղղությամբ նույնիսկ որևէ իրական փորձ չկատարեց: Նրա դիրքի անորոշությունը, Ղարաբաղյան հարցի նկատմամբ սեփական պլատֆորմի բացակայությունը և երկչոտությունը հանգեցրին կուսակցական ու կառավարական մարմինների լիակատար ինքնամեկուսացման ու հեղինակազրկման: Հայաստանի Նախարարների խորհրդի այն ժամանակվա նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանն իր հուշագրության մեջ խոստովանում է, որ «մինչև 1988 թվականի փետրվարը մեզ մոտ Ղարաբաղի հարցի ոչ մի պաշտոնական քննարկում չի եղել»[12]: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության ազգային-ազատագրական շարժումը հանկարծակի չսկսվեց: Այն հասունացել էր տասնամյակների ընթացքում: Հետևաբար, խաղաղ ցույցերում ու հանրահավաքներում առաջ քաշված խնդիրները նորություն չէին: Հայաստանի կուսակցական բարձրագույն ղեկավարությանը լավ հայտնի էր, որ տակավին 1987 թ. Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ մարզի տասնյակ հազարավոր աշխատավորներ դիմումներ էին հղել ԽՄԿԿ կենտկոմ: Հիմնախնդրի արդարացի լուծման անհրաժեշտության մասին դեռևս տարիներ առաջ և հենց նույն 1987 թ. հանրապետության մի շարք կազմակերպություններ (ԳԱ պատմության ինստիտուտ, պետհամալսարան, Գրողների միություն և այլն) իրենց ժողովներում համապատասխան որոշումներ էին ընդունել: Սակայն այս ամենը հիմնականում անտեսվում էր Հայաստանի կուսակցական բարձրագույն մարմինների կողմից: Ուստի բնական էր, որ 1988 թ. փետրվարյան օրերին հանրապետության ղեկավարությունը Ղարաբաղյան շարժումը գլխավորելու փոխարեն նրա նկատմամբ սկզբում անտարբերություն, իսկ հետագայում ծայրահեղ զգուշավորություն դրսևորեց: Այդ է վկայում նաև հանրապետության կառավարության նախագահի այն ժամանակվա առաջին տեղակալ, ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամ Վլադիմիր Մովսիսյանը. «Փետրվարի 23-ին հրավիրվեց բյուրոյի նիստ, որտեղ ընթերցվեց քաղբյուրոյի որոշումը, որով դատապարտվում էին սկսված գործողությունները: Խնդիր էր դրվում հավանություն տալ քաղբյուրոյի որոշմանը և կարգուկանոն հաստատել հանրապետությունում: Այսինքն՝ ԽՄԿԿ կենտկոմը հենց սկզբից Ղարաբաղի ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը ամբողջովին մտցրեց փակուղի, և մենք էլ՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի անդամներս, որոշեցինք հարցը ներկայացնել կուսակցական ակտիվի ժողովին՝ նույն օրը: Ակտիվի ժողովում ընթերցվեց բանաձևի նախագիծը, և առաջարկություն արվեց առանց մտքերի փոխանակության ընդունել այն: Ներկայացված բանաձևում ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի որոշումը չէր վկայակոչվում, որը չէր կարող չառաջացնել ակտիվի ժողովի շատ մասնակիցների վրդովմունքը... Բանաձևը այդ շարադրմամբ չընդունվեց: Եղան նաև բազմաթիվ առաջարկություններ... Սակայն հաջորդ օրը թերթերում հրապարակվեց ակտիվի ժողովի բանաձևը, որով հավանություն էր տրվում քաղբյուրոյի որոշմանը: Ինչն էր ցավալին: Դրանով մենք կորցնում էինք ժողովրդի վստահությունը, ջուրը նետում ԼՂՀ-ի հիմնահարցի վերաբերյալ 70-ամյա մեր իսկ գաղափարախոսությունը: Ուստի այդ պատճառով էլ, ցավոք սրտի, Ղարաբաղի հիմնախնդիրը կուսակցական

[12] **Սարգսյան Ֆ.,** Կյանքի դասեր (Հուշեր), Ե., 2000, էջ 160:

պաշտոնական ատյաններից տեղափոխվեց փողոցներ ու հրապարակներ: Մենք չկարողացանք ժողովրդի ճշմարիտ հարցադրումներին պատասխանել, ուստի ժողովրդի փայփայած գաղափարը արմատներ գցեց այնտեղ, որտեղ այդ մասին ճշմարտություններ էր ասվում... Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն կորցրեց պահը և բաց թողեց նախաձեռնությունը: Եվ քանի որ Հայաստանի կոմունիստների 90 տոկոսից ավելին պաշտպանում էր Ղարաբաղյան շարժումը, ապա ոչ թե կոմկուսը, այլ կենտկոմի բյուրոն և նրա կազմում նաև ես, չկարողացանք իրադրության տերը դառնալ, իսկ հետագայում ինչքան էլ փորձեցինք շտկել սխալը, հնարավոր չեղավ կորցրածը վերականգնել»[13]: Թեև հետագայում հանրապետության կուսակցական նոր ղեկավարությունը (1988 թ. մայիսին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը ազատվեց իր զբաղեցրած պաշտոնից և նրան փոխարինեց Սուրեն Հարությունյանը) ջանքեր էր գործադրում շարժումը գլխավորելու և այն իր համար ցանկալի հունով տանելու համար, սակայն նրա հնառճ գործելակերպը ապարդյուն դարձրեց այդ ջանքերը: Ժողովուրդը կորցրել էր հավատը ղեկավարության նկատմամբ: Վերջինս արտահայտվում էր նաև կոմկուսի շարքերից զանգվածաբար դուրս գալով, ինչն աստիճանաբար հանգեցրեց կուսակցական կազմակերպությունների կազմալուծմանն ու կուսակցական մարմինների սասանմանը:

Հանրահավաքներում Ղարաբաղյան հիմնախնդրի հետ միասին վերհանվում էին նաև հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի թերությունները: Փաստորեն, Արցախյան շարժման ընթացքում ժողովրդական զանգվածները գնում էին առջևից, իսկ ղեկավարությունը՝ շարժման հետևից: Ուստի և պատահական չէր, որ ժողովուրդն ինքն ընտրեց իր շարժման ղեկավարներին: Արդեն իսկ 1988 թ. փետրվարին ստեղծվեց Կազմկոմիտե, որի մեջ մտան Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, Սամսոն Ղազարյանը, Վազգեն Մանուկյանը, Աշոտ Մանուչարյանը, Համբարձում Գալստյանը, Ալեքսան Հակոբյանը, Սամվել Գևորգյանը, Վանո Սիրադեղյանը, Արմեն Հովհաննիսյանը, Հենրիկ Իգիթյանը և այլք: Կազմկոմիտեն շարժմանը կազմակերպված բնույթ տվեց: Նա կազմակերպում և ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները, որոնց ընթացքում ժողովրդի հետ քննարկում էր շարժման խնդիրներին ու անելիքներին առնչվող հարցեր, վերջիններիս վերաբերյալ արտահայտում իր նկատառումները և ժողովրդի հավանությամբ կայացնում որոշումներ ու ձեռնամուխ լինում դրանց իրագործմանը: Այսպիսով, Ղարաբաղում և Հայաստանում հետզհետե խոսքի և ոչ պաշտոնական մամուլի լիակատար ազատություն հաստատվեց: Երևանի Թատերական հրապարակը վերածվեց Ազատության հրապարակի, ուր յուրաքանչյուր ոք կարող էր արտահայտել սեփական կարծիքը, փակցնել թռուցիկներ, հայտարարություններ և այլն: Միաժամանակ խոսքի ազատության հետ մեկտեղ զանգվածների գիտակցության

[13] **Մովսիսյան Վ.,** Հողի ճակատագրով. Մտորումներ տքնության, Ե., 2001, էջ 135-138:

մեջ գործում էր ինքնազրաքննության յուրահատուկ մեխանիզմ, որի շնորհիվ ժողովուրդը կանխում էր երբեմն հնչող ծայրահեղական ելույթներն ու կոչերը:

Ղարաբաղյան շարժումը Հայաստանում և Արցախում համադրելու նպատակով Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ մարտի սկզբներին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտե: Հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում, շրջաններում, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում սկսեցին ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեներ, ինչը և շարժմանը կազմակերպչական նոր ձև տվեց:

Համոզվելով, որ քաղաքական մեթոդներով չի հաջողվում կասեցնել Ղարաբաղյան շարժումը, ադրբեջանական իշխանությունները և ԽՍՀՄ կենտրոնական մարմինները Արցախում և Հայաստանում ծավալված խաղաղ հանրահավաքներին ու ցույցերին հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը: 1988 թ. փետրվարի 22-ին ադրբեջանցիների բազմահազարանոց ամբոխը Աղդամի շրջանից ներխուժեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ: Այն, ավերելով հայերի տներն ու բռնություններ կիրառելով նրանց հանդեպ, շարժվեց դեպի Ստեփանակերտ: Միլիցիայի ջոկատներին ու արցախահայերի խմբերին մեծ դժվարությամբ հաջողվեց Ասկերան ավանի մոտ կանգնեցնել մոլեռանդ ամբոխին: Տասնյակ հայեր վիրավորվեցին, երկու ադրբեջանցի սպանվեց, որոնցից մեկը՝ ազերի միլիցիոների կրակոցից: Դրանից հետո սկսվեցին շրջանառվել Հայաստանում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ կիրառվող բռնությունների մասին ստահոդ լուրեր:

Փետրվարի 25-26-ին Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող բազմազգ Սումգայիթ քաղաքում հայտնվեցին ինչ-որ «փախստականներ»՝ իբրև թե Հայաստանի Ղափանի շրջանից, որոնք վկայում էին այնտեղ հայերի կազմակերպած ադրբեջանական ջարդերի մասին: Փետրվարի 27-ին կենտրոնական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Կատուսևը և տեղեկացրեց, որ հինգ օր առաջ Ասկերանի մոտակայքում զոհվել է երկու երիտասարդ ադրբեջանցի: Այդ սադրիչ ելույթից հետո նույն օրը՝ երեկոյան, Սումգայիթում կազմակերպված հանրահավաքը վերաճեց իսկական վայրագությունների: Գազազած ամբոխը, խմբերի բաժանվելով, «մահ հայերին» կոչերով հարձակվեց նրանց տների վրա: Սկսվեցին սոսկալի կոտորածները: Անմեղ մարդկանց կենդանի այրում էին, անդամահատում նրանց վերջույթները, կանանց մերկացնում և ծաղր ու ծանակի ենթարկելով՝ քշում էին քաղաքի փողոցներով, որից հետո բռնաբարում և դաժանորեն սպանում էին: Սպանդն ուղեկցվում էր հայերի ունեցվածքի համատարած թալանով և բնակարանների հրկիզումով: Թե՛ տեղական իշխանությունների և թե՛ քաղաքի մերձակայքում տեղակայված խորհրդային բանակի զորամասի հրամանատարության կողմից կանխարգելիչ ոչ մի քայլ չձեռնարկվեց արյունարբու ամբոխին զսպելու համար: Փաստորեն ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության թողտվությամբ Սումգայիթում իրականացվում էր հայ ազգաբնակչության ցեղա-սպանություն: Հաջորդ օրը՝ փետրվարի 28-ին, անպատժելիությունից ոգևորված բարբարոսները կրկին հավաքվեցին քաղաքի կենտրոնական հրապարակում: Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Սումգայիթի քաղկոմի առաջին

քարտուղար Մուսլիմ-զադեն, վերցնելով մահմեդական կանաչ դրոշը, առաջնորդեց ջարդարարների ստվար շարասյունը: Կոտորածներն ու թալանը նոր թափով վերսկսվեցին և ավելի դաժան ու զանգվածային բնույթ ընդունելով՝ շարունակվեցին ևս երկու օր: Պաշտոնական տվյալներով վայրագ ամբոխի կողմից գազանաբար տանջամահ արվեցին 27 հայեր, խոշտանգվեցին ու ծանր վիրավորվեցին հարյուրավոր անպաշտպան մարդիկ[14]: Սակայն բազմաթիվ վկայությունների համաձայն՝ շատ սպանվածների մարմիններ փոխադրվել էին այլ քաղաքներ, հրի մատնվել կամ գաղտնի թաղվել[15]: Հաշվարկները ցույց են տալիս, որ Սումգայիթում զոհվել է 100-ից ավելի հայ, շուրջ 300 հոգի ստացել տարբեր աստիճանի վերքեր[16]: Ինչպես հետագայում պարզվեց, սումգայիթյան ցեղասպանությունը հիմնավոր նախապատրաստվել էր ադրբեջանական իշխանությունների կողմից: Նախօրոք քաղաքի անձնագրային բաժինների միջոցով կազմվել էին հայերի հասցեացուցակները, անջատվել նրանց բնակարանների հեռախոսները, խողովակաշինական գործարանում պատրաստվել էին երկաթե սրածայր ձողեր, հայաշատ թաղամասերի ճանապարհներն արգելափակվել էին խճաքարերի կուտակումներով և այլն:

Փաստորեն, ծրագրված կոտորածն ու թալանը կենսագործելուց հետո միայն՝ փետրվարի 29-ի գիշերը, երեք օր ուշացումով (թեև հետագայում Մ. Գորբաչովը պնդում էր, թե իբր երեք ժամ), միութենական կենտրոնական իշխանությունները զորք մտցրին Սումգայիթ: Զինվորականներին մեծ դժվարությամբ (նրանք ևս զոհեր ունեցան) հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը և քաղաքից դուրս բերել ողջ մնացած հայերին: Սումգայիթի 18 հազար հայ բնակչությունը, չցանկանալով դառնալ ադրբեջանական հրոսակների զոհը, մի քանի օրում հեռացավ քաղաքից: Ավելի քան 3 հազար փախստականներ պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները ցրվեցին ամբողջ երկրով մեկ[17]:

Սումգայիթյան իրադարձություններն իրենց վայրագությամբ ցնցեցին խորհրդային և միջազգային հանրությանը: Սակայն կենտրոնական իշխանությունները, ամեն կերպ ձգտելով կոծկել տվյալ ոճրագործությունը, չտվեցին կատարվածի իրավական ու քաղաքական գնահատականը՝ այն որակելով որպես զանգվածային խուլիգանական ելույթներ: Չնայած ԽՍՀՄ տասներկու քաղաքներում տեղի ունեցած դատավարություններին՝ ըստ էության, XX դ. վերջերի այս եղեռնի կազմակերպիչներն ու իրագործողներն անպատիժ մնացին և չարժանացան միջազգային հանրության համարժեք գնահատականին: Դրա հետևանքով սումգայիթյան ջարդերն ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ հալածանքների ու բռնի տեղահանման նոր ալիքների ազդակ հանդիսացան, իսկ ազգային պատկանելության սկզբունքով իրականացվող սպանությունների և

---

[14] *Сумгаит...Геноцид...Гласность?, Е., 1989, с. 20.*

[15] **Бабанов И., Воеводский К.**, *Карабахский кризис, СПб., 1992, с. 9-10.*

[16] Հայաստանի Հանրապետություն, 1. III. 2005:

[17] *Нагорно-Карабахская республика. Путь к вершинам, с. 82; Нагорный Карабах. Историческая справка, с. 63.*

տեղահանությունների շղթան տարածվեց ամբողջ միությունով՝ Օշ, Ֆերգանա, Դուշանբե, Վրաստան, Մոլդովա և այլուր:

Հակահայկական քարոզչության և տիրող անպատժելիության մթնոլորտում 1988 թ. կեսերից Ադրբեջանում հայերի նկատմամբ բռնություններն ավելի լայն ծավալներ ընդունեցին: Լուրջ սպառնալիքի տակ դրվեց այդ հանրապետությունում հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյությունը: Նոյեմբերին Կիրովաբադից (այժմ Գյանջա), Բաքվից, Շամխորից, Խանլարից, Դաշքեսանից և հայաշատ այլ վայրերից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց: Ընդ որում, բռնի տեղահանումն ամենուր ուղեկցվում էր սպանություններով, խոշտանգումներով և ունեցվածքի թալանով: Միայն 1988 թ. մարտից մինչև դեկտեմբեր, շուրջ 200 հազար բռնագաղթված ադրբեջանաբնակ հայեր հանգրվանեցին Երևանում, Մասիսի, Արարատի, Վարդենիսի, Հրազդանի, Աբովյանի, Կրասնոսելսկի շրջաններում, հանրապետության հյուրանոցներում, հանրակացարաններում, առողջարաններում, հանգստյան տներում և այլուր[18]: Ադրբեջանից բռնագաղթված հայերի մի մասն ապաստանեց ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններում և, հատկապես, Հյուսիսային Կովկասում:

Սակայն հայահալած քաղաքականության ծավալումը չընկճեց հայ ժողովրդին, ընդհակառակը, նրան ավելի համախմբեց: 1988 թ. մարտին Ղարաբաղում և Հայաստանում նոր թափով վերսկսվեցին բողոքների բազմահազարանոց ցույցերը: Իր հայրենակիցների արդար պահանջին սատար կանգնեց աշխարհասփյուռ հայությունը: Փարիզում, Նյու-Յորքում, Մոնրեալում, Տորոնտոյում, Վաշինգտոնում, Լոս-Անջելեսում, Սիդնեյում, Բեյրութում, Բուենոս-Այրեսում, Միլանում և այլուր տեղի ունեցան արտասահմանի հայության զանգվածային ցույցեր և երթեր: Հայ ժողովուրդը ԽՍՀՄ ղեկավարությունից պահանջում էր Արցախի հիմնահարցն արդարացի լուծել, պատժել սումգայիթյան եղեռնագործներին, տալ կատարվածի քաղաքական գնահատականը: Բայց կենտրոնն անդրդվելի էր: Այն հետևողականորեն նույնացնում, հավասարեցման նշան էր դնում Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների հանցագործի և զոհի միջև: Դա արտահայտվեց նաև Արցախյան հիմնախնդրի քննարկմանը նվիրված՝ ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի 1988 թ. մարտի 10-ի նիստում, որին մասնակցում էին Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարները: Քաղբյուրոն ստեղծված իրավիճակի ամբողջ պատասխանատվությունը հավասարապես բարդեց երկու հանրապետությունների ղեկավարությունների վրա[19]: Նիստի մասին հաղորդագրության հրապարակումից հետո իրավիճակն է՛լ ավելի սրվեց: Մարտի 17-ին կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի պլենումը որոշում ընդունեց խնդրել ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյին քննարկելու և դրականորեն լուծելու ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին միացնելու հարցը՝ դրանով իսկ ուղղելով 1920-ական թվականների սկզբին Ղարաբաղի տարածքային պատկանելությունը որոշելու ժամանակ թույլ տրված պատմական սխալը[20]: Սակայն կենտրոնը

---

[18] *Коммунист, 26. IX. 1989.*

[19] **Սարգսյան Ֆ.**, նշվ. աշխ., էջ 170-191:

[20] Սովետական Ղարաբաղ, 18. III. 1988:

հետևողականորեն շարունակում էր առաջնորդվել իր որդեգրած ուղեգծով: Նրա հրահանգով միութենական բոլոր հանրապետությունների գերագույն խորհուրդների նախագահությունները մարտի 22-ին քննարկեցին ԼՂԻՄ-ում ստեղծված իրավիճակի մասին հարցը և իրենց որոշումներում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը խնդրեցին՝ պահպանելով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, երկրի Սահմանադրությանը համապատասխան՝ միջոցներ ձեռնարկել նման «պառակտչական» տրամադրությունների դեմ: Մարտի 23-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունեց որոշում՝ «Լեռնային Ղարաբաղում, Ադրբեջանական ու Հայկական ԽՍՀ-ներում ստեղծված իրավիճակի առթիվ միութենական հանրապետությունների դիմումների կապակցությամբ միջոցառումների մասին»[21]: Այդ «միջոցառումներն» իրենց երկար սպասեցնել չտվեցին: Նույն մարտ ամսին Երևանը փաստորեն գրավվեց Խորհրդային բանակի կողմից: Մայրաքաղաքի փողոցներում ու հրապարակներում մեծ թվով հրասայլեր, զրահամեքենաներ ու զինվորականներ հայտնվեցին: Նրանք իրենց հսկողության տակ առան ՀԿԿ կենտկոմի, հանրապետության Գերագույն խորհրդի, Նախարարների խորհրդի, կուսակցական ու կառավարական այլ գերատեսչությունների շենքերը, ռադիոտունն ու հեռուստակենտրոնը, կենտրոնական փոստը, կամուրջները և այլ ռազմավարական կետեր: Ձգտելով ամեն գնով խոչընդոտել Երևանում բազմամարդ ցույցերի ու հանրահավաքների կազմակերպմանը՝ զինվորականները թույլ չէին տալիս հանրապետության շրջանների բնակչության մուտքը մայրաքաղաք:

Հայ ժողովրդին ահաբեկելու և նրան իր արդարացի շարժումից հետ կանգնեցնելու նպատակով կազմակերպվում էին նաև զանազան սադրանքներ: Հունիսի 5-ին ռետինե մահակներով և երկաթյա շղթաներով զինված «հատուկ ջոկատայինները» ներխուժեցին «Զվարթնոց» օդանավակայանի սպասասրահ ու դաժան ծեծի ենթարկեցին այնտեղ գտնվող անմեղ քաղաքացիներին: Բազում մարդիկ, այդ թվում՝ կանայք և երեխաներ, մարմնական ծանր վնասվածքներով տեղափոխվեցին հիվանդանոցներ: Նույն օրը Երևան-Էջմիածին մայրուղու վրա խորհրդային բանակի սպայի կողմից գնդակահարվեց 22-ամյա Խաչիկ Զաքարյանը: Հետագայում զանգվածային թունավորումներ կազմակերպվեցին Մասիս քաղաքում և Երևանի «Անուշ» արտադրական միավորումում, ինչի հետևանքով հաշմանդամ դարձան տասնյակ հայ աշխատավորուհիներ:

Սակայն հայ ժողովուրդը տեղիք չտվեց սադրանքներին: Նա շարունակեց ազգային շահերի իրականացման համար իր արդարացի պայքարը: Վերջինիս բորբոքմանը նպաստեց նաև Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահության հունիսի 13-ի որոշումը՝ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի փետրվարյան որոշման մերժման մասին[22]: Դրանից հետո՝ Հայաստանում տեղի ունեցող ցույցերի և հանրահավաքների ընթացքում, ժողովուրդը ԼՂԻՄ-ի փետրվարի 20-ի պատմական որոշումը կատարելու նպատակով հանրապետության իշխանություններից ավելի վճռականորեն սկսեց պահանջել Հայաստանի

---

[21] **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Ե., 1997, էջ 54:

[22] *Бакинский рабочий, 14.VI. 1988.*

Գերագույն խորհրդի նստաշրջանի հրավիրում: Հանրապետության ղեկավարությունը կենտրոնի ուժեղ ճնշման ու իր անվճռականության հետևանքով տատանվում էր և անընդհատ ձգձգում նստաշրջանի հրավիրումը: Բայց ժողովուրդը չէր նահանջում: Հանրահավաքներին ու ցույցերին զուգընթաց՝ Երևանում սկսվեցին զանգվածային գործադուլներ, հացադուլներ, նստացույցեր: Իշխանություններին ոչինչ չէր մնում անելու, քան նստաշրջան հրավիրել: 1988 թ. հունիսի 15-ին իր աշխատանքները սկսեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Այն, ընդառաջելով ԼՂԻՄ մարզխորհրդի դիմումին և հիմնվելով ազգերի ազատ ինքնորոշման վերաբերյալ ԽՍՀՄ Սահմանադրության 70-րդ հոդվածի վրա, համաձայնություն տվեց մարզը Հայաստանի կազմի մեջ մտնելուն և այդ հարցը քննելու ու դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց երկրի Գերագույն խորհրդին: Միաժամանակ հանրապետության խորհրդարանը Սումգայիթում կատարված ոճրագործությունները դատապարտող որոշում ընդունեց[23]: Ի պատասխան դրա՝ հունիսի 17-ին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը կրկին մերժեց ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշումը[24]: Հունիսի 21-ին Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը, քննության առնելով փետրվարի 20-ի որոշման շուրջ ծավալված իրադարձությունները, Սումգայիթում, Շուշիում, Խոջալուում և այլ վայրերում տեղի ունեցած հակահայկական վայրագությունները համարեց Արցախի հարցի լուծման ձգձգման արդյունք և պահանջեց մինչև դրա վերջնական լուծումն ամենակարճ ժամկետում ինքնավար մարզը հանել Ադրբեջանական ԽՍՀ կազմից և դնել ԽՍՀՄ կառավարության անմիջական ենթակայության տակ: Հունիսի վերջին կայացած ԽՄԿԿ XIX կոնֆերանսի որոշումներում որևէ հստակ խոսք չէր ասվում Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման մասին, և վերջինիս վերաբերյալ ուղղակի տրվում էին անորոշ հանձնարարականներ: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում իրավիճակն ավելի սրվեց: Հուլիսի 12-ին ԼՂԻՄ մարզխորհրդի 8-րդ նստաշրջանը Ղարաբաղի հիմնահարցի լուծումն արագացնելու խնդրանքով կրկին դիմեց կենտրոն: Նույն օրը Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը բեկանեց այդ որոշումը: Հուլիսի 13-ին ԼՂԻՄ կուսակցական մարզկոմի բյուրոն միահամուռ ընդունեց որոշում, որով հաստատում էր մարզխորհրդի որոշման օրինականությունն ու իր համերաշխությունը մարզի հայության կամքի հետ[25]:

Այսպիսով, Ղարաբաղը և Հայաստանը դարձան այն տարածքները, ուր ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ խորհրդային իշխանության բարձրագույն մարմինները որոշումներ էին ընդունում ներքևից՝ ժողովրդի կամքով, և ոչ թե վերևից իջեցված հրահանգներով: Շարժման ընթացքում այդ մարմինների կայացրած գրեթե բոլոր որոշումները ժողովրդի կամքի արտահայտությունն էին: Քաղաքական առումով թերևս սա էր շարժման ամենանշանակալից նվաճումը, որը ձեռք բերվեց ժողովրդի համառ պայքարի շնորհիվ: Լեռնային Ղարաբաղի ժողովրդ-

[23] Սովետական Հայաստան, 16. VI. 1988:

[24] *Бакинский рабочий, 18. VI. 1988.*

[25] **Ուլուբաբյան Բ.,** նշվ. աշխ., էջ 77-78:

դական պատգամավորների և Հայաստանի Գերագույն խորհուրդներն աստիճանաբար վերածվեցին քիչ թե շատ ժողովրդավարական խորհրդարանների, որոնց նիստերին մասնակցում էին նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

1988 թ. հուլիսի 18-ին Ղարաբաղի խնդրի շուրջ Մոսկվայում հրավիրվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որին մասնակցում էին նաև Ադրբեջանի, Հայաստանի և ԼՂԻՄ-ի պատգամավոր ներկայացուցիչներ: Մինչ այդ միութենական տարբեր ատյաններում հակամարտող կողմերի ներկայացուցիչների հետ կազմակերպվել էին «բարոյախրատական» բնույթի մի շարք հանդիպումներ, որից հետո հարցը մտցվել էր երկրի բարձրագույն իշխանության մարմնի օրակարգ: Նիստում հայ ժողովրդի ներկայացուցիչները՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանը, Սերգեյ Համբարձումյանը, գրող Վարդգես Պետրոսյանը, կոմկուսի ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը և այլք, իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը և մեկ անգամ ևս ընդգծեցին Ղարաբաղյան շարժման օրինականությունն ու Արցախը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտությունը: Սակայն ԽՍՀՄ-ի ներսահմանային անխախտելիությանը ձգտող բարձրագույն իշխանության ներկայացուցիչները նախապես մշակված ծրագրով դատապարտեցին հայ ժողովրդի արդարացի շարժումը և մերժեցին ԼՂԻՄ-ի մարզային ու ՀԽՍՀ Գերագույն խորհուրդների խնդրանքը[26]: Միաժամանակ, ելնելով տվյալ որոշումից, ԽՄԿԿ կենտկոմը և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը հուլիսի վերջին որոշում ընդունեցին՝ ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Վոլսկուն իբրև կենտկոմի և ԳԽ նախագահության ներկայացուցիչ ԼՂԻՄ ուղարկելու մասին, որի նպատակն էր կենտրոնի վերոնշյալ և այլ որոշումների իրականացման համար «Ադրբեջանի, Հայաստանի ու ԼՂԻՄ-ի կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների աշխատանքի կազմակերպումն ու համատեղումը»[27]: Ըստ էության, ստեղծվեց միայն կենտրոնական կառավարությանը ենթակա մարմին, որն ուներ ամենալայն իրավունքներ մարզի ինքնուրույն ու ինքնիշխան տնտեսական, վարչական և մշակութային զարգացումը կազմակերպելու համար: Դա փաստորեն այն էր, ինչ ԼՂԻՄ մարզխորհուրդը պահանջել էր հունիսի 21-ի իր արտահերթ նստաշրջանի որոշումով: Սակայն հայ ժողովրդի հույսերը չարդարացան: Թեև Ա. Վոլսկին որոշ քայլեր կատարեց Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև տնտեսական ու մշակութային կապեր հաստատելու ուղղությամբ, բայց հանդիսանալով կենտրոնի ներկայացուցիչ՝ նա հիմնականում անշեղորեն առաջնորդվում էր «հավասարակշռության պահպանման» քաղաքականությամբ, ինչը դժգոհություն էր առաջացնում թե՛ Լեռնային Ղարաբաղում, թե՛ Հայաստանում և թե՛ Ադրբեջանում:

Խոր հիասթափություն ապրող հայ ժողովուրդը նոր թափով շարունակեց իր պայքարը: Դեռևս մայիս ամսին կազմավորված Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն, որի կազմի մեջ մտել էին Լևոն Տեր-Պետրոսյանը, Վազգեն

---

[26] Սովետական Հայաստան, 20. VII. 1988:

[27] **Ուլուբաբյան Բ.**, նշվ., աշխ., էջ 84:

Մանուկյանը, Բաբկեն Արարքցյանը, Վանո Սիրադեղյանը, Աշոտ Մանուչարյանը, Դավիթ Վարդանյանը, Ռաֆայել Ղազարյանը, Ալեքսան Հակոբյանը, Համբարձում Գալստյանը, Սամվել Գևորգյանը և Սամսոն Ղազարյանը, ձեռնամուխ եղավ քաղաքական պայքարի նոր մեթոդների կիրառմանը: Հայաստանում, իսկ ավելի վաղ՝ Ղարաբաղում, կազմակերպվեցին քաղաքական բնույթ կրող լայնածավալ համազգային գործադուլներ, որոնց նպատակն էր կենտրոնական իշխանությունների ուշադրությունը բևեռել հայ ժողովրդի արդար պահանջի վրա և սահմանադրորեն բավարարել այն: Գործադուլները կազմակերպվում էին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կոչով: Սակայն երկարատև համազգային գործադուլները շոշափելի հարված հասցրեցին Հայաստանի տնտեսությանը, նպաստեցին նրա կազմալուծմանն ու միության տարբեր տարածաշրջանների հետ տնտեսական կապերի և համագործակցության խաթարմանը: Վերջինս հանգեցրեց հանրապետության տնտեսական մեկուսացմանն ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացմանը: Այս ամենը, ինչպես նաև Հայաստանի ղեկավարության անհրաժեշտ աջակցության բացակայությունը, առաջացրեցին Արցախյան շարժման սկզբնական փուլում այն գլխավորած ճանաչված մտավորականների մեծ մասի հիասթափությունը, որոնք աստիճանաբար իրենց տեղը զիջեցին ժողովրդական լայն զանգվածների վստահությունը վայելող Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամներին: Շարժման նոր առաջնորդների երևան գալով՝ հետզհետե փոխվեց նաև նրա գաղափարախոսությունը: Եթե սկզբնական շրջանում Արցախյան շարժումն ուներ զուտ ազգային բնույթ, ուղղված չէր կոմունիստական վարչակարգի դեմ, և Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի կենսագործումը՝ որպես պատմական արդարության վերականգնմանը նպատակաուղղված քայլ, իրագործելի էր թվում ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում, ապա իրադարձությունների հետագա զարգացման թելադրանքով հետզհետե առաջնային պլան մղվեցին ազգերի ինքնորոշման իրավունքի վրա հիմնված սահմանադրական իրավունքի և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրաճանաչ նորմերը: Ղարաբաղյան շարժումն աստիճանաբար ազգայինից վերածվեց ազգային-ժողովրդավարականի:

1988 թ. նոյեմբերի 7-ին Հոկտեմբերյան հեղափոխության 71-րդ տարեդարձին նվիրված շքերթը Երևանում վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի: Նրա մասնակիցները, հասնելով մայրաքաղաքի Լենինի (այժմ Հանրապետության) հրապարակ, կառավարական ամբիոնի առջև վանկարկում էին «Միացում», «Արցախ», «Հեռացե՛ք» կարգախոսները: Նույն թվականի հոկտեմբեր-նոյեմբերին տեղի ունեցած՝ հանրապետության Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների ընթացքում ժողովրդին հաջողվեց արմատական բեկում մտցնել ընտրությունների անցկացման քարացած կարգում և խորհրդարանի պատգամավորներ ընտրել Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանին ու «Գթություն» բարեգործական միության նախագահ Խաչիկ Ստամբոլցյանին: Իսկ 1989 թ. օգոստոսին կայացած մասնակի ընտրություններում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրվեցին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի ևս երկու անդամներ՝

Լևոն Տեր-Պետրոսյանն ու Ռաֆայել Ղազարյանը, ինչպես նաև Արցախում շարժման ղեկավարներ՝ Ռոբերտ Քոչարյանն ու կենտրոնական իշխանությունների կողմից Մոսկվայի բանտերից մեկում արգելափակված, «Կռունկ» կազմակերպության նախագահ Արկադի Մանուչարովը: Նորընտիր պատգամավորները զգալի ազդեցություն ունեցան Հայաստանի Գերագույն խորհրդի հետագա գործունեության վրա:

1988 թ. նոյեմբերի 24-ին, հակառակ իշխանությունների դիմադրությանը, ժողովրդի նախաձեռնությամբ և պատգամավորների մեծամասնության կամքով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի շենքում գումարվեց Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նիստ: Հանրապետության խորհրդարանը մերժեց երկրում ընտրությունների անցկացման նոր օրինագծի և ԽՍՀՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հրամանագրի ընդունումը՝ նկատի ունենալով դրանց հակաժողովրդավարական բնույթը: Միաժամանակ որոշվեց, որ այդուհետ Հայաստանում կգործեն կենտրոնական իշխանությունների միայն այն որոշումները, որոնք կարժանանան հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանը:

Մոսկովյան իշխանություններն այդ նիստն ու նրա ընդունած որոշումները հակասահմանադրական ու ապօրինի համարեցին: Իրական ժողովրդավարության խորացումը և նրա ազգային դրսևորումները չէին մտնում կենտրոնի պլանների մեջ: Ինքնորոշման նման ձգտումները կարող էին համակել նաև միութենական մյուս հանրապետություններին: Ուստի պատահական չէր, որ նույն գիշեր Երևանում հատուկ դրություն ու պարետային ժամ մտցվեց (ԼՂԻՄ-ում այն դեռևս սեպտեմբեր ամսին էր մտցվել): Դրանով իսկ իշխանությունը հանձնվեց զինվորականներին: Արգելվեց ամեն տեսակի հանրահավաքների, ցույցերի ու գործադուլների կազմակերպումը:

Այսպիսով, ԽՍՀՄ-ում «վերակառուցման» քաղաքականությամբ պայմանավորված փոփոխությունների հետևանքով 1988 թ. փետրվարին սկիզբ առավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, որը, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջաններում տարվող պայքարի, բացահայտ էր ու հստակ: Ամբողջ հայ ժողովուրդը միահամուռ ոտքի ելավ պաշտպանելու Արցախի իր հայրենակիցների ինքնորոշման իրավունքը: Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց, ինչը հանգեցրեց Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծմանը նպա-տակաուղղված համազգային շարժման ծավալմանը: Սակայն կենտրոնական իշխանություններն ամեն գնով ձգտում էին կասեցնել կոմունիստական կայսրության ամբողջականությանը սպառնացող ժողովրդական շարժումը: Արցախն ու Հայաստանը դարձան ԽՍՀՄ-ում ժողովրդավարական նախաձեռնությունների փորձադաշտ՝ միաժամանակ այդպիսին դառնալով նաև կենտրոնի կողմից կիրառվող կամ խրախուսվող հակաժողովրդավարական քայլերի ու ահաբեկչական գործողությունների համար: Ըստ էության, Արցախյան շարժումը խորհրդային կայսրության փլուզումն արագացնող գործոններից մեկն էր: Այս առումով ուշագրավ է «վերակառուցման» քաղաքականության

նախաձեռնողներից մեկի՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի այն ժամանակվա նախագահ Ն. Ռիժկովի խոստովանությունը. «Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ կենտրոնը չցանկացավ կամ, այնուամենայնիվ, չկարողացավ լսել Ղարաբաղյան «զանգը»[28]:

## НАЧАЛО И РАЗРАСТАНИЕ АРЦАХСКОГО ДВИЖЕНИЯ

(февраль-ноябрь 1988 гг.)

АЗИЗБЕКЯН Р. Л.

### Резюме

Апрельский пленум ЦК КПСС 1985 г. принял решение о коренной перестройке всего советского общества. У армянского населения Арцаха появилась надежда на справедливое решение проблемы Нагорного Карабаха, “тлеющая” с начала 1920-х годов.

20 февраля 1988 г. на внеочередной сессии Нагорно-Карабахского областного Совета народных депутатов, в соответствии с Конституцией страны, было принято решение о ходатайстве перед Верховными Советами СССР, Азербайджанской и Армянской ССР о передаче НКАО из состава Азербайджана в состав Армении, что было единодушно поддержано населением Армянской ССР. Руководство СССР квалифицировало конституционное требование армянского народа как инспирированное “экстремистами” и “националистами”, поскольку осуществление права самоопределения народов угрожало целостности коммунистической империи.

С началом Арцахского движения проявилась оторванность руководства Армении от народных масс. Оно заняло крайне нерешительную и осторожную позицию, что еще более углубило недоверие народа к нему. Народ сам выбрал лидеров своего движения.

27-29 февраля 1988 г. в Сумгаите при попустительстве центральных властей азербайджанцами была организована резня армянского населения, которая сопровождалась насилием, погромами, грабежами. Однако политика провокаций, угроз и насилия не смогла воспрепятствовать разрастанию Арцахского движения, которое постепенно превратилось из национального в национально-демократическое.

[28] **Рыжков Н.**, *Перестройка. История предательств, М., 1992, с. 208.*